



Հիմնավորագիր և երաշխավորագիր

DAAD Deutscher Akademischer Austausch Dienst
German Academic Exchange Service

Հիմնավորման գրելաձև և կենսագրություն

Հիմնավորման մեջ պետք է նշված լինեն դիմորդի՝ արտասահմանում ուսանելու դրդապատճառների մասին:

Հիմնավորման գրության չափանիշները՝

- առավելագույնը A4 ձևաչափի, մինչև 1,5 էջ,
- ամսաթիվը, ուղարկողի անունը և ազգանունը պետք է նշված լինեն փաստաթղթի վերևի մասում,
- տողերի հեռավորությունը լինի ընթերցելու համար հարմար, պահպանվեն պարբերությունները և էջերի եզրերը, ինչպես նաև ամբողջ փաստաթղթի նույն տառատեսակը և տառաչափը (11 կամ 12),
- հիմնավորագիրը պետք է լինի առանց լուսանկարի,
- հիմնավորագիրը շարադրված պետք է լինի առանց շատ երկար և բարդ նախադասությունների, արտահայտման պարզ, հստակ և հասկանալի ձևով,
- հիմնավորագրի մեջ պետք է լինեն ամբողջական նախադասություններ և ոչ թե միայն թվարկված կետեր,
- դիմորդի անձնական ստորագրությունը լինի վերջում,
- հիմնավորագիրը սկսվի “Sehr geehrte Damen und Herren“ (Հարգելի տիկնայք և պարոնայք) խոսքերով և ավարտվի “Mit freundlichen Grüßen“ (Բարեկամական ողջույններով)՝ ձևով:

Հիմնավորման գրության բովանդակությունը՝

- պետք է նշված լինեն ավարտած ուսման բովանդակությունը և նպատակները,
- նախկին կամ ներկայիս ուսման և Գերմանիայում ձգտած ուսման միջև կապը,
- հիմնավորել, թե ինչու՞ եք ցանկանում ուսումը շարունակել Գերմանիայում և հենց տվյալ բուհում,
- նշել ակադեմիական գերազանց առաջադիմության մասին, առկայության դեպքում նաև կրթաթոշակային կամ ցանկացած այլ տեսակի պարգևատրումների մասին,
- ուսման հետ կապ ունեցող անձնական հմտությունները և հետաքրքրությունները, հատկապես արտահամալսարանական և սոցիալական ակտիվությունը:

Պետք է խուսափել հետևյալ սխալներից՝

- հիմնավորման գրության մեջ չպետք է կրկնվի կենսագրությունը,
- հիմնավորագրի ոճը չպետք է լինի լիրիկական
- խուսափել տարածված, ձևական և դատարկ արտահայտություններից,
- չլինեն տեղեկություններ ընտանիքի մասին,
- թվարկված չլինեն ոչ եական տեղեկություններ, ինչպես օրինակ մագիստրական որևէ ծրագրի դիմելու համար կարևոր չէ երաժշտական դպրոցի առաջադիմությունը:

Կենսագրություն՝

<http://www.europass-info.de/de/start.asp>

կայքէջում Դուք կգտնեք խորհուրդներ, օրինակներ, ինչպես նաև միջազգայնորեն ճանաչված կենսագրության մոդուլներ՝ գերմաներենով և անգլերենով:

Կենսագրությունը չպետք է

գերազանցի A4 ձևաչափի 2 էջը:



Երաշխավորագիր

Դասախոսի կամ պրոֆեսորի կողմից տրված երաշխավորագիրը տալիս է տեղեկություններ դիմորդի որոշակի հատկանիշների և կարողությունների մասին: Այն պետք է պարունակի տեղեկություններ դիմորդի կրթական առաջադիմության և գիտական ներուժի մասին: Անհրաժեշտ է պատասխանել հարցերին մանրամասն և հատկապես դիմորդի մասնագիտական որակավորման վերաբերյալ՝ կապված Գերմանիայում ուսանելու նրա ձգտման հետ:

Երաշխավորագիր գրելու ցուցումներ

- Որտեղից և որքան ժամանակ եք ճանաչում դիմորդին:
 - Երաշխավորագիր տվող պետք է նշի, թե որքան ժամանակ է ճանաչում դիմորդին:
 - Ինչ պայմաններում է եղել երաշխավորագիր տվող անձը դասախոսի և դիմորդի կապը (դասընթացներ/ դասախոսություններ, գիտական աշխատանքների ղեկավարում)
- Դիմորդը մտնում է լավագույն ուսանողների կամ ասպիրանտների ... %-ի մեջ:
 - Նույն կուրսի ուսանողների հետ համեմատած՝ տոկոսային ո՞ր խմբի մեջ կարող է նա մտնել՝ հաշվի առնելով նրա առաջադիմությունը:
- Ի՞նչ մասնագիտական և անձնական հատկանիշներով է աչքի ընկնում և առանձնանում դիմորդը, և որքան եք Դուք գնահատում նրա գիտական ներուժը:
 - մասնագիտական զարգացման և աճի ներկա վիճակը և Գերմանիայում ուսման շնորհիվ նրա հետագա զարգացման և աճի հնարավորությունները,
 - մասնագիտական՝ օրինակ ուսման գերազանց առաջադիմություն, (արտա)համալսարանական բարձր ակտիվություն, օտար լեզվի գիտելիքները,

- անձնական՝ օրինակ բաց, շփվող, ծանրաբեռնվածությանը դիմացող, ինքնագիտակցության զգացում ունեցող, անձնական հասունություն և այլն:

- Ինչպե՞ս եք գնահատում ծրագրի կամ գիտական թեմայի նախապատրաստությունը, կատարողականությունը, արդիականությունը և ժամանակային պլանը:
 - Արդյո՞ք դիմորդն ի վիճակի է ուսանել/ավարտել ուսումը Գերմանիայում,
 - լեզվական և մասնագիտական գիտելիքների մակարդակը,
 - օտար լեզվով քննություններ հանձնելու կարողությունը, անձանոթ միջավայրում կողմորոշվել կարողանալը,
 - նախկին ուսման շնորհիվ ձեռք բերած ներկայիս գիտելիքները:
- Ի՞նչ նշանակություն կունենա կրթաթոշակը դիմորդի և/կամ հայրենիքում նրա բուհի կամ այլ հաստատության գիտական և մասնագիտական կայացման կամ հետագա զարգացման համար:
 - Գերմանիայում ստացած կրթաթոշակի կոնկրետ ազդեցությունը կրթաթոշակակրի կարիերայի վրա:
- Լրացուցիչ տեղեկություններ, որոնք կարող են նշանակություն ունենալ դիմորդին կրթաթոշակ տրամադրելու վերաբերյալ որոշում ընդունելու ժամանակ:
 - դիմորդի մասին տեղեկություն, որը նշված չի եղել նախորդ հարցերում, օրինակ դիմորդի սոցիալական, հասարակական/կամավորական ակտիվությունը կամ նախաձեռնողականությունը, ակադեմիական պարզապատկերներ կամ այլ հատուկ որակավորումներ:

DAAD-ի երևանյան տեղեկատվական կենտրոն

Սարմենի փ. 82
0019 Երևան
Հեռ./ֆաքս՝ +374 10 58 25 15
Էլ.փոստ՝ info@daad.am

Խորհրդատվության ժամերը

Երկուշաբթի: 15:00 - 18:00
Երեքշաբթի: 10:00 - 12:00
Չորեքշաբթի: 14:00 - 18:00
Հինգշաբթի: 10:00 - 12:00